



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

18

ԳԼՈՒԽ ՄԱ ՎԱՄՆ ՍՊԱՍԱԻՈՐԵԼՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Պաշտօն է պատարագիրք եւ սպասք եկեղեցոյն ի գլխաւոր քահանային տանն եղիցին, որպէս եւ յառաջագոյն կարգեալ է: Գլխաւոր քահանայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողոյ եւ գործոց տան իւրոյ պարապել, այլ մշտնջենաւոր ի սուրբ եկեղեցոջն կացցէ, զի պաշտօնն եւ զաղօթքն տուրնջեան եւ զիշերոյ ժամուցն եւ զտեսչութիւն ժողովրդեանն մի՛ խափանեսցէ: Իսկ այլ ընկերքն զամառն փոխանակաւ կացցեն ընդ նմա անպղերգաբար: Ապա թէ իցէ ոք, որ սխալեսցի ի պաշտմանէն պղերգութեամբ կամ երկրական հոգովք, մի՛ իշխեսցէ ի մտիցն մասն առնուլ: Քահանայքն միական լիցին յօրհնեալ միաբանութեամբ զժողովուրդն եւ որոշել ի սրբոյ եկեղեցոյ: Բարեկարգապէս եցոյց զդատաստան հասոյից եւ զսպասատրութիւն քահանայից աստուածային եւ սուրբ կանոնս, եթէ ոք կամեսցի ճշմարտութեամբ կալ ի գործ քահանայութեան, ապա թէ ոչ՝ անպարտ լիցին դատաստանք եկեղեցոյ եւ զպարտատրութիւնն առցեն հեղգացեալքն:

ԳԼՈՒԽ ՄԲ ՎԱՄՆ ՎԱՆԱՅ ԵՒ ՆՈՅԻՆ ԵԿԵՂԵՑԵԱՅՆ

Կամ եղեւ ինձ եւ յաղագս այսոցիկ սակաւ ինչ գրել, զի ոչ փոքր ինչ հակառակութիւն ի մէջ մեր լինի յաշխարհի յաղագս այսոցիկ աշխարհական քահանայից եւ վանաց: Սակայն ընդ միտ ածի եւ վասն կանոնաց մեծին

Սահակայ, թէ որքան գեղեցիկ եւ ըստ կարգի բաժանէ զվանաց եւ գեկեղեցոյ, որ յաշխարհի, զհասս եւ զտօնս, եւ այժմ շփոթեալ եւ ապականեալ է այն ամենայն: Վասն այնորիկ լոեցաք յայսոցիկ դատաստանաց, զի թէ ի սրբոյն ոչ պատկառեն ի բանից, զհա՞րդ եւ ի մերոց: Եւ թէ վասն սորին դատաստանի կամի որ զի ուղղիցէ, այնոքիք արժան է վարիլ եւ ոչ այլագգ, զի թէ եւ կայր կարծիս՝ այժմու գրելովքս դատաստան դատել, ոչ էր ի դէպ մեզ յանդգնիլ, թող թէ բնաւին ոչ էր կարծիս: Ըստ այսմ կարծեմ եւ յամենայն ի մեր աշխատութիւնս:

ԳԼՈՒԽ ՄԳ ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Ի յիշատակս ննջեցելոցն յընտանեաց նոցա, որ ինչ ըստ կարգի օրինաց քրիստոնէութեան, զոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխիթարութիւն հոգոց նոցա՝ կամ զքառասուն եւ զազապս ի հանգիստ նոցա, կամ զտուրս, զոր ինչ եւ հրամայիցէ վախճանեալն հոգոյ իւրոյ, մի՛ իշխեսցեն յայլ եկեղեցիս կամ ի կրօնաւորս տալ, այլ անդէն գեղջի երիցուն լիցի եւ վանաց՝ այնպիսեաց հասք, եւ իւրեանց տան երիցուն, ուր շնորհօք սուրբ աւագանին վերստին եղեւ ծնեալ եւ պսակեալ եւ կենաց հացին կերակրեալ, ուստի եւ յղարկեալ առ Աստուած երթայ: Իսկ յորժամ հարկաւորն յիւրում եկեղեցոջն կատարեալ լինի եւ կամեսցի աւելորդս ինչ առնել յայլ եկեղեցիս, կամ ի կրօնաւորս, կամ յաղքատս, ապա լիցի համարձակ առնել ինչ: Յոյժ ուղիղ է այս դատաստան՝ յետ զհարկաւորն առնելոյ յիւրն եկեղեցոջ, ապա յայլս կամ ի կրօնաւորս տալ: Կամ թէ պատահի յաղագս անձեռնհասութեան եւ կամ յաղագս յուսոյ ի հեռաւորս եւ զհարկաւորն տալ հաւանութեամբ իւր տան երիցուն եւ հրամանաւ իւր վանաց առաջնորդին, զնոսա ըստ կարի շահելով, ներելի են եւ այնքիկ, յորժամ չիցէ յաղագս զիւրն արհամարհելոյ: Ապա թէ ոչ կամեսցին նոքա, անդէն որքան կարեն արասցեն. եւ այդ անհակառակ է:

ԳԼՈՒԽ ՄԴ ՎԱՍՆ ԲԱՆԱԴՐԵԼՈՅ

Ժողովրդական որ, որ յաղագս պէսպէս սխալանաց ինչ բնադրեալ լինիցին յեպիսկոպոսաց, թէ մեռանի՝ ոչ թաղէ քահանայն, եւ ոչ երեխայ մկրտել: Եւ թէ դէպ լիցի երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռել որ, քահանայն մկրտեսցէ զերեխայն եւ զմեռեալն թաղեսցէ եւ զայլ կարգս բանին պնդութեամբ պահեսցէ

անլոյծ: Ջինքն զբանադրեալն հրամայէ չթաղել, թէ մեռանել հասանէ, եւ թէ երեխայ է բանադրեալն՝ չմկրտել, այլ գտան մեռեալն թաղել եւ գերեխայն մկրտել: Եւ երկուցն օրինադրէ եպիսկոպոսաց, զի մի՛ զբոլոր տունն ընդ բանիւ արասցեն, եւ կամ քահանայն անգիտաբար վասն միոյն բանադրանաց գայլսն գրկեսցէ: Նաեւ ոչ քահանայի օրէն է յաղագս միոյն գամենայն տունն բանադրել, եւ այլ քահանայ, թէ այդպիսի պատահի, թաղեսցէ եւ մկրտեսցէ, բայց գայլ սահման պահեսցէ: Եւ թէ առաւելութեամբ իցէ բանադրանքն, աղաչանօք յայտ ածելի է, զի մի՛ այլքն ընդ բանիւ կացցեն վասն միոյ մեղուցելոյն:

ԳԼՈՒԽ ՄԵ ՎԱՍՆ ՓԱԿՈՂԱՅ ՁԵԿԵՂԵՑԻ

Քորեպիսկոպոսունք մի՛ իշխեսցեն փակել գեկեղեցոյ դուռն եւ խափանել գաստուածային աղօթից ժամն վասն օրընթրեաց կամ վասն միոյ յանցանաց, բայց զպարտաւորս ընթրեացն եւ զմեղուցելոցն անձինս բանադրեսցեն: Կարծիս տայ, թէ յաղագս այլոյ յանցանաց հրամայէ փակել: Յայտ է, թէ ոչ եւ վասն միոյ յանցանաց փակել ի դէպ է գեկեղեցին եւ խափան առնել սպասաւորութեանն, այլ սպասաւորացն սաստել յանցաւորացն, թէ փակել տան գեկեղեցիս, բայց թէ պատահի հակառակ շինել եւ առանց հրամանի: Չսոյն սաստ դնէ եւ գեղջաւագաց՝ հանդերձ նգովիք:

ԳԼՈՒԽ ՄԶ ՎԱՍՆ ԳԵՐԵԼՈՅ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Յորժամ վասն մեղաց մերոց աշխարիս գերեցաւ, բազում արք եւ կանայք, որ ի գերութեան էին, եւ նոցա ամուսինքն՝ աստ, առանց վարդապետաց հրամանի կանայս առին, եւ արանց եղեն: Վասն այնպիսեացն սահմանեցաք այսպէս: Ջի թէ յառաջ քան զեթն ամ որ յանդգնեցաւ, մինչ զուզակիցքն ի գերութեան էին, եւ այլ առին, այնպիսեացն ի պոռնկութիւն համարեսցի, եւ գան եւ պատուհաս կրեսցեն, եւ յընչից եւ ի ստացուածոց առնուլ եւ աղքատաց տալ, եւ զատուցեն ի միմեանց, եւ ապաշխարեսցեն եւթն ամ: Եւ յետ եւթն ամին թէ դատնան ամուսինքն ի գերութենէն, իւրաքանչիւր որ զիւր ամուսինն առցէ, ապա թէ ոչ՝ յետ ապաշխարութեանն կալցին զոր առինն: Եւ նոքա, որք դատնան յետ եւթն ամի, օրհնութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լինին, եւ կրկնոցից ապաշխարութիւն ի վերայ եղիցի: Իսկ որ հաբերեացն ցեթն ամն, յետ եւթն ամին

այլ առցէ առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Նոյնպէս որ յետ եւթն ամին դառնան ի գերութենէն, եթէ կամք իցեն՝ այլ կին առցեն, եւ այլ առն լիցին, եւ նոյնպէս զկրկնոցացն ապաշխարեսցեն: Ձայս իսկ առեալ է զվերջնոյ կանոնի գիրաման, զոր եւ մեք չափաւորապէս ըստ գանազանութեան եղաք եւ ի մերն, եւ գոյն աստ յաւելաք, զի աստ ամենակատար իսկ է այս դատաստան: Եւ եթէ ինչ ի մերն հակառակ կարծեսցի, այսոքիւք վարելով՝ անբամբաս մեք մնասցուք, զի խնդիր մեր այն է, զի ճշմարիտ լիցի յեկեղեցիս դատաստան:

ԳԼՈՒԽ ՄԷ ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՅ

Եթէ այր որ կամ կին ի սրբոյ եկեղեցոյ անորդի մեռցի, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն ինչ, եւ անցեալ ըստ ինքն՝ ի մերձաւորաց շիշխէ հեռացուցանել զհող, եւ զջուր, եւ զժողովուրդ: Եւ ի մերձաւորսն, եթէ բազումք են, եւ կամի զմի որ որդի առնել, իշխան է առնել՝ որ գնա հեշտ որ կալցի: Եւ թէ կամի վաճառել կամ հոգոյ տալ, իշխան է: Իսկ եթէ որ յորդեգրաց ի քահանայութիւն ձեռնադրի կամ գեղջն վկայութեամբ, կամ յանձնէ, որում չէր անկ քահանայութիւն, զկէս շնորհին կալցի յաղագս ձեռնադրութեանն անհարկ, զկէս շնորհին, զհող եւ զջուր բաւանդակ սրբոյ եկեղեցոյն յանկաւորսն թողցէ: Եւ անցեալ ըստ քահանայն եւ ըստ կին նորա՝ ամենայն շնորհն իսկ բաւանդակ յանկաւորսն երթիցէ, զի չվայելէ սրբոյ եկեղեցոյ զժառանգութիւնն յանկաւորացն հեռացուցանել եւ տալ հեռաւորաց եւ օտարաց: Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ կամ հաճելով տալ՝ թողացուցէ վարդապետն եւ զայն՝ մի շինականի ումեք, այլ սրբոյ եկեղեցոյ յովստէ, թէպէտ եւ հեռաւոր իցէ՝ իշխան լիցի մերձաւորեցուցիչն մերձաւորեցուցանել: Ապա թէ գեղ դիպի, որ իրիցուն ի ժառանգութիւն բարձեալ իցէ, ժառանգութիւն սրբոյ աթոռոյն է, զոր վարդապետն կամի՝ ժառանգեցուցանէ, իշխան է: Եւ այս սահմանադրութիւնս շերակլեայ է եւ Խոսրովայ լինելով ժամանակօք եւ այսր լիցի: Բայց յառաջ քան գնցա ժամանակն որ ինչ լեալ է, մի՛ շարժեսցի, զի չգիտէ ինչ հաստատութեամբ, որպէս կալեալ է՝ կալցին: Բայց նոցա ժամանակացն եւ յայսմ հետէ եւ յաիտեան այս զիր հաստատուն կացցէ, եւ մի՛ որ անցցէ ըստ այսմ սահմանաւ: Տեսցուք եւ զայս հոգետր դատաստան, զի իշխան առնէ իւրոցն տալ ում եւ կամի, իսկ զեկեղեցոյն չհեռացուցանել յանկաւորացն: Եւ թէ պատահի ի հեռաւոր

անկատրաց կամ յօտարաց, գոր որդեգիր արար, քահանայանալ, զկնի իւր ի մերձաւոր յանկատրսն ասէ թողուլ. զի թէ պատահի ի նոցանէ քահանայանալ՝ կալցին, ապա թէ ոչ՝ նոցին կամօք յօտարս տալ իշխան լիցին առաջնորդքն, սակայն ի տանէ քահանայութեան իցէ՝ գոր ժառանգ առնեն: Յայտոսիկ գայս առաւելուլ ի դէպ է, զի ոչ միայն յորժամ ժառանգաւորքն բարձեալ լինին յեկեղեցոյն՝ սուրբ աթոռոյն է այն, այլ թէ պատահին անկատրքն անարժան լինել, թէ քահանայք իցեն, թէ ոչ իշխան է գարժանաւորսն ի քահանայից կացուցել: Եւ այդ ըստ ճշմարտութեան է:

ԳԼՈՒԽ ՄԸ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԱԶԱՏ Է ՅԱՄԵՆԱՅՆԷ

Ազատք յորժամ զհրեանց զերդ եւ զմարդ բաժանեն, յոլովք չարակամութեամբ առնեն եւ զմանկունս եկեղեցոյ ըղնձանան ծառայս առնել եւ ի ստրկութեան պահեն, որ չվայելէ քրիստոնէից: Զի երիցս երանելոյն Տրդատայ թագաւորին գտորբ եկեղեցոյ զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է, եւ ազատ էին որդիք սրբոյ եկեղեցոյ, հող եւ ջուր: Եւ ի Պարսից թագաւորութեան ժամանակին թէպէտ եւ ի պէկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի էր եւ չէր խառնեալ ընդ շինականսն, բայց միայն զհարկսն տային յարքունիսն: Արդ եթէ որ ազահութեամբ ակամբ հայեսցի եւ զազատ մանկունս եկեղեցոյ ի բաժին եւ ի վիճակ ծառայութեան արկանիցէ, այնպիսին ի մեր ժողովոյս օրհնութենէն հեռի եղիցի, եւ մի՛ եղիցի իշխանութիւն վարդապետին եւ քահանայից գայնպիսոյն զպատարագս օրհնել: Այլ եւ ոմանք զՈգիայի ախտն ախտանան եւ ըստ իւրաքանչիւր կամաց, եւ ըստ իւրաքանչիւր ֆրմի բաժանեն շնորհս սրբոյ եկեղեցոյ եւ որպէս կամին մատակարարեն, եւ վարդապետին հրամանի եւ օրինաց ունկն չդնեն, այնպիսիքն նոյնպէս ի մեր օրհնութենէ հեռի եղիցին, որք յանդգնին գայնպիսի ինչ առնել: Լուիցեն ազատք ի Վիրս, զի գայսպիսի լուծին գուղիդ եւ զկանոնական զնախագոյն հրաման:

ԳԼՈՒԽ ՄԹ ՎԱՍՆ ՎԱՆԱՑ

Ոմանք տանուտէրք եւ ազատք ի վերայ վանաց իշխանութիւն առնեն եւ վանական՝ գոր կամին հանեն եւ գոր կամին՝ նստուցանեն վասն ժլատութեան: Այլ եւ ոմանք իսկ ի վանս նստին եւ ըստ գրեցելումն, որպէս թէ չունիցին արդէօք տուն

հաց ուտելոյ, որ գեկեղեցեաւն Աստուծոյ արհամարհեն անպատկառելի անամօթութեամբ: Այնպիսիքն եթէ յուղոութիւն գան եւ յեպիսկոպոսն թողուն, որ տեսչութիւն առնէ սրբոցն լուսոյ եւ պաշտման եւ դպրոցս կարգաւորելոյ, այնպիսեացն անցելոց մեղացն թողութիւն շնորհեալ եղիցի, եւ ի ժողովոյս օրհնեալ եղիցին: Եւ ժողովրդեամբ, եւ օրհնութեամբ, եւ պտղաբերութեամբ, եւ ուխտադրութեամբ երթիցեն եւ աղօթեսցեն ի վանօրեայսն, որպէս պարտ է յիրեանց հարանցն վաստակս եւ յաղօթանոցս, բայց ժլատանալ եւ հանել ինչ մի՛ իշխեսցեն: Ապա թէ հակառակ ինչ կայցեն հրամանի հարանցն եւ մեր պատուիրանցս, այնպիսիքն ի մեր օրհնութենէ հեռի եղիցին եւ զհատուցումն ի սրբոց վկայիցն ընկալցին: Որպէս եւ գրեալ է, թէ արասցեն վրէժխնդրութիւն յազգս եւ յանդիմանութիւն՝ ի ժողովորդս:

ԳԼՈՒԽ ՄԺ ՎԱՍՆ ՏԿԱՐԱՆՈՑԱՅ

Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն եւ հարկս, եւ նշեմս, եւ կերակուրս, եւ ըմպելիս պահանջեն բռնութեամբ, եւ զհիրեանց գործակալս ի վերայ գումարեն, եւ կոռով եւ պահակութեամբ նեղեն, եւ զողորմելի եղբայրսն չարչարեն անխղճաբար, որում մանաւանդ առաւել դարման տանել պիտոյ էր եւ ամենայն քրիստոնէից պատել զամենայն վէրս նոցա: Արդ, եթէ որ յայսմ հետէ յանդգնի զայսպիսի ինչս առնել ի տկարանոցս, անողորմ դատաստանաւ դատելոց են այնոքիկ, որ ոչ առնեն զողորմութիւն:

ԳԼՈՒԽ ՄԺԱ ՎԱՍՆ ՈՐ ԵՐԹԱՆ ԲՈՆՈՒԹԵԱՄԲ Ի ՎԱՆՍ ԻԶԱՆԵՆ

Ոմանք ազատք եւ հեծեալք, որ ի գեղորեայս հասանեն, որոց բնաւ ի վանսն տեղի լինի, ի գեղ չիջանեն, այլ ոմանք կանամբք եւ նաժշտօք ի վանս իջանեն եւ այնպէս կոխեն զկանոնս հարցն, եւ զուսանօք եւ վարձակօք ի սրբութեան եւ ի պաշտամանց տունն ընթրիս ուտեն, որ սոսկալի է քրիստոնէից լսել, թող թէ տեսանել: Արդ, զվերագրեալ կանոնսդ ի լսելիս այնպիսեացն ընթերցցին վանաց երիցունքն. եթէ լինին լսող եւ երթան ի գեղորեայսն իջանեն՝ բարի է, ապա թէ ի նմին անհնազանդութեան կացցեն՝ այնպիսիքն նոյնպէս ի մեր օրհնութենէն հեռի եղիցին եւ զվրէժխնդրութիւնն ի սրբոցն ընկալցին: Զի վանքդ անուն

հանգստարան սրբոց կոչի եւ օթեվանք եպիսկոպոսաց, եւ քահանայից, եւ
աբեղայից, եւ աղքատաց: Եւ ազատք եւ կանայք, եւ հեծեալք եւ արք, մինչ
կոչելով կոչին, մեծաւ երկիւղիւ պարտ է աղօթել եւ աղօթից եւ պաշտաման
հաղորդել, որպէս վայել է ի տան Աստուծոյ: Այսոքիկ օրինադրական
դատաստան յայտնի է ամենեցուն:

ԳԼՈՒԽ ՄԺԲ ՎԱՍՆ ԹԷ ՔԱՆԻ՞ ԱԶԳ ԱՌՆՈՒՆ ԶԻՐԱՐ

Զի որպէս առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղեւ գրել ի նոյն նիւթիւ
տասներորդ ամի տէրութեան Խոսրովայ՝ որդոյ Ռոմզդի, գնոյն եւ առ քո
սրբութիւնդ հարկեցաք գրել՝ պինդ ունել գպատուէր Հոգոյն Սրբոյ ի ձեռն Օրինաց
եւ Մարգարէից, զոր առաքելական կանոնադրութեամբ հաստատեցին սուրբ եւ
ուղղափառ վարդապետքն: Բայց մանաւանդ առաւելագոյն զգուշանալ յանիծեալ
ամուսնութենէ մերձատրաց, որ ազգաւ մոտատրութիւն է, եւ կործանին յայնքան
չարիս: Քանզի ոչ միայն զխառնակութիւն ազգահամարութեանն գործեն
այնպիսիքն, այլ եւ զագահութիւն, որ է արմատ ամենայն չարեաց, ասէ
առաքեալն, զհեթանոսաց օրէնս անաստուածս լինել, որպէս եւ
նախամարգարէին ծանօթացոյց աստուածապաշտաց. եւ բիր եւ այլ չարիս,
որպէս եւ իմաստնոց յայտնի է: Զի թէ աստուածային բերանն անիծանէ
գմարդիկ, որ փոխեն զընկերի եղեալ սահմանս, իսկ զԱրարչին զբոլորեցունց
զսահմանադրութիւն եւ գպատուէր առ ոտն կոխել եւ հարկանել եւ
արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ճանաչելի է այս, վասն նոցա եւ այլք:
Եւ յայտ անտի է, զի ի հնումն, զորս ըստ ելից, Աստուած այսպէս ասաց, թէ ըստ
կրօնիցն ազգացն Եգիպտացոց եւ Քանանացոց մի՛ երթայցէք, ես եմ Տէր
Աստուած ձեր: Եւ ի կարգ արկեալ՝ գայսպիսի անկողինս կոչեաց
խայտառականաց առականս, որով ամբարիշտքն վարէին: Հրաժարեցոյց
յառաջին ազգէն եւ ապա՝ յերկրորդէն եւ հասեալ յայն, զոր մեք խորթս կոչենք, եւ
ասէ՛ մի յայտներ, զի համմօրեայ քոյր է: Եւ ապա յետ ոչ սակաւ բանից եւս
զարմանալոյ արժանի իմն նշանակէ. քանզի իբր ասաց, թէ համմօրեայ քոյր քո է,
դարձեալ երկրորդէ այսպէս, թէ գառականս կնոջ եւ դստեր նորա, որ լինի մին
կին, եւ միւսն՝ խորթ, մի՛ յայտնեցես եւ զդուստր ուստեր նորա, այսինքն է՝
զխորթին, եւ կամ զդուստր դստեր նորա մի՛ առնուցուս, քանզի ամբարշտութիւն է:
Ապա վերագոյնս քան գայս նշանակէ, որ նոյն մեզ երրորդ ազգ կարծի, ըստ

յառաջ յայտնագոյնդ առնելոյ մեր, գառականս դասեր ուստեր քոյ կամ դասեր դասեր քոյ մի՛ յայտնեսցես: Բայց մի՛ որ կարծեսցէ զասացեալս ի վերայ ծնողին միայն, այլ եւ՝ որք ի նմանէն, քանզի այս կատարեալ յիմարութիւն է, քանզի ոչ ուրուք եղբայր առանց հօր կամ քոյր, այլ թէ եւ հօրաքեռ որդի կամ մօրաքեռ, քանզի եւ ազգակցութիւն մի է, նոյն եւ որդոց: Չի որպէս առաջին, եւ երկիր եւ երիր՝ ազգ ասին, այսպէս եւ եղբօրորդոցն եւ կամ այլոց առ միմեանս առաջին ազգն, եւ երկրորդն, եւ երրորդն, եւ քառորդ՝ ազգ ասին: Եւ ոչ այսչափ. բայց եւ այլ որոշումն, արժանի գարմանալոյ, ուսուցանէ աստուածագանն մեզ Օրէնք. գառականս նոյն մի՛ յայտնեսցես եւ գոուստր դասեր նորա եւ կամ գոուստր ուստեր նորա մի՛ առնուցու: Որ ցուցանէ զայս. իբր թէ մեռեալ որդոյն, եւ նոյնն առն այլում եղեալ եւ ծնեալ ուստր, եւ նորա կին առեալ այլ դուստր ծնանիցի՝ մի՛ առնուցու զնա ի կնութիւն, զի ամբարշտութիւն է, այսինքն՝ զկատարեալն իսկ զսահման ցուցանէ՝ զի՞ գարշելի է յամուսնութենէ: Իսկ Սուրբ Հոգին Ովսեալ մարգարէի զամենայն անհնարին եւ զչարաչար մեղս փոքր համարեցաւ առ այսու յանցմամբ եւ ամբաստանութեամբ: Լուր որ զասացեալս նշանակէ. եթէ լոկ անուամբ գոյ, զի՞նչ հարագատութիւն է միջի կայ, ասէ. դատաստան Տեառն է ընդ բնակիչս աշխարհի, զի ոչ գոյ ճշմարտութիւն, եւ ողորմութիւն, եւ գիտութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, այլ անէծք, եւ ստութիւն, եւ գողութիւն եւ շնութիւն, եւ սպանութիւն հեղեալ ի վերայ երկրի: Իսկ աւելի ամբարշտութիւն եւ մեղք կսկծելի այն են, որ արին ընդ արինս խառնեն, որ է ազգականաց ամուսնութիւն: Եւ հատուցումն այնմ զայս պատմէ. վասն այդր, ասէ, առցէ սուգ երկիր եւ նուաղեսցի ամենայն բնակչօք իւրովք, այլ եւ գազանք անապատի, եւ սողունք, եւ թռչունք երկնից պակասեսցին, զի ոչ որ էր, որ յանդիմանէր եւ դատէր: Արդ, մինչ բանն յանդիմանութեան եւ դատելոյ զայնպիսիսն ձեզ հաւատացաւ, եւ անփոյթ առնես՝ եւ զանձն դատապարտես, եւ որոց իշխեսն: Բայց եթէ արին յարին ոչ տաս խառնել, որ մինչեւ արին մերձաւորութեանն սպառի, արդարութեամբ կատարեալ զարդարես զքո վիճակդ: Իսկ յանդգնելոց եւ պատերազմասիրաց ընդ Հոգոյն Սրբոյ՝ բան կանոնին, զոր երանելի հարցն ի Քրիստոս հաստատեալ է եւ մինչեւ ցայժմ իբրեւ զարեգակն անշիջանելի պահի, նոցա զայս աւանդեսցես. սկիզբն ի հինգերորդէն յառաջ, քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ՝ զսահմանն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է, որում տեղեակ է քո սրբութիւնդ: Յամենայն գրեթէ ի կանոնս այնոցիկ եղաւ սահման, այլ լիով աստ, զոր առեալ եցոյց յՕրինաց եւ ի Մարգարէից: Չոր

եւ մեզ գայտսսիկ քննելի է, թէ ո՞ր արդեօք յաւելուած ըստ նորոյն եղեւ ի ձեռն կանոնաց: Քանզի Օրէնքն հրաժարեցոյց զառ ի հօրէ եւ զառ ի մօրէ քեռէ, որ է ըստ այսմ. թէ պատահի առնուլ կին, եւ նորա դուստր իցէ եւ եթէ զկնի առնելոյն ծնանիցի: Իսկ կանոնք հրամայէ ըստ այսմ. մի՛ տալ զխորթս միմեանց եւ մի՛ զառ ի նոցանէ զծնունդս մինչեւ ի զարմն երրորդ, ապա ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչեւ ցորդիսն թոռանց որդոցն, որ լինին հինգերորդ ազգ, ապա ամուսնասցին: Այլ խորթս միմեանց զխորթակիցսն ասէ մինչեւ ցերրորդն, յայտ է, զի զչորրորդին հրամայէ, եւ ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչեւ ցորդիսն՝ երրորդին ասէ, որ խորթօքն լինի չորրորդ եւ ծնողքն՝ հինգերորդ: Եւ զայս ասէր, թէ պատահի մինն ի խորթուցն, եւ մինն՝ ի ծնողաց խորթուցն, եւ կամ ի խորթուցն ծնողաց՝ չորրորդ, եւ ծնողքն՝ հինգերորդ, ապա ամուսնասցին: Եւ զի Օրէնքն զհօրքոյր կամ զմօրքոյր յիշէ, իսկ կանոնք զծնունդս նոցա եւ զծնունդս զեղբօր մօր եւ զայլոցն միապէս հրաժարեցուցանէ: Զխորթուց եւ զթոռանց, որ յորդոյ եւ ի դստերէ, եւ զեղբարց ծնունդս կան նոնք եւ Օրէնք միօրինակ հրաժարեցուցանեն. նմանապէս եւ՝ զծնունդս. որ ի նուէ:

ԳԼՈՒԽ ՄԺԳ ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գիտելի է, զի կանոնք հրամայէ՝ մի՛ որ իշխեսցէ խնամութիւն առնել մինչեւ ի չորրորդ եւ ի հինգերորդ զարմն: Զնոյն իսկ զՕրինացն ասէ, զի զերրորդ զծնունդն, զոր հրամայէ չառնուլ, յայտ է, զի զչորրորդին հրամայէ առնուլ, եւ որ առնու՝ լինի հինգերորդ: Եւ զայս յամենայն ընտանութիւնս է իմանալ, եւ այս է չորրորդն եւ հինգերորդն: Եւ թէ Օրէնքն եւ կանոնք զխնամիս ոչ յիշեն, յաղագս զմի ցուցանելոյ օրինակ՝ նման այլոցն բաժանիլ ծննդօք. զի զայս ասէ Օրէնքն՝ երկուս քոյրս ոչ առնուլ, եւ կանոնք զքոյր կնոջ յընտանութիւն առն փոխել ասեն: Ուստի յայտ է, զի այսպէս ամենայն օրինակաւ խնամիք յընտանութիւն փոխին, եւ աստ այլոց մերձատրաց՝ ծննդօք զատանին: Եւ արդ, ըստ Օրինաց եւ կանոնաց այսպէս զուգին, թէ եղբարց ծնունդք իցեն եւ թէ այլոց, զի առաջին՝ ծնողքն ի թիւ ոչ անկանին, զի վասն այնր իսկ զարմ ասէ չորրորդ կամ հինգերորդ: Եւ դարձեալ՝ զի մի՛ խոնարհագոյն քան զայն իցէ, զի չորրորդ ի միոյ կողմանէ ասէ լինել, եւ թէ ի միւս կողմանէ մին պակաս լինի՝ անխարելի է. եւ այս յայտ յՕրինացն է՝ զառականս մի՛ յայտնեսցես. իւր իսկ ասէ, զի երրորդին ոչ հրամայէ եւ զչորրորդն առնու, եւ առնողն՝ հինգերորդ: Նոյն է ըստ կանոնացն: Եւ թէ հինգ

պատահի լինել՝ բարի է, եւ գարմիցն հինգ լինել նոյն է. եւ թէ որքան մի կողմն իցէ, եւ միսն նոյն գտանի՝ առաւելութիւն է, ապա թէ ոչ գտանի՝ լիցի որպէս ցուցաւ: Եւ թէ երեք ի մին կողմանէ իցէ, եւ երկու՝ ի միսն, եւ այս լինելի է, զի որպէս հրամայեցաւ յՕրինացն՝ զչորրորդն առնուլ հինգերորդին, զի յորժամ առցէ, մնասցէ երրորդն: Նոյն է՝ երեք ի մին կողմանէ իցէ, եւ երկու՝ ի միսն, ի լինելն մնայ երեք: Նոյն լիցի եւ որդոցն, զի մի է հեռաւորութեան օրինակն: Սոյնպէս, թէ երեք ի մին կողմանէ իցէ, եւ երեք՝ ի մին, ի լինելն մնայ չորրորդ. եւ այդ ըստ հինգերորդ գարմիցն է, որպէս այն՝ ըստ չորրորդին: Այսպէս յամենայն խնամութիւնսն այնքիկ լիցին, զի ի լինելն մնայ երեքն կամ չորսն: Բայց հինգերորդն լիցի քահանայից, եւ չորրորդն՝ աշխարհականացն ամենեցուն: Իսկ երեք ի մի կողմանէ, եւ մին՝ ի միսոյն, ոչ է լինելի. նոյնպէս՝ երկու՝ ի միոջէ, եւ երկու՝ ի միսոյն, զի ի լինելն մնան երկու եւ ոչ երեք: Արդ, այսոցիկ ոչ է համարձակելի, եւ թէ յանդգնի որ՝ քակեսցի. ապա թէ ոչ կարասցեն՝ ապաշխարութեամբ ուղղեսցին: Իսկ եթէ անգիտանալով արասցեն կամ զընտանութիւն եւ կամ զսաստ պատուիրանին, այդոցիկ այլազգ լիցի ներելն: Ապա թէ երկու ի մի կողմանէ իցէ, եւ մի՝ ի միոյ, բնաւին մի՛ տայցեն թոյլ, եւ թէ յամառեալ արասցեն՝ քակեսցի. իսկ եթէ ոչ կարեն՝ կամ յաղագս յանդգնութեանն, կամ զի իշխանք իցեն, ծանր ապաշխարութեամբ սահմանեսցի. իսկ թէ անգիտանալով ըստ ասացելոցն իցէ, այլազգ լիցի ներելն: Սակայն իշխանաց այլազգ լիցի ներումն յամենայնսն: Ապա թէ մի ի միոյ կողմանէ իցէ, եւ մինն՝ ի միոյ, բնաւին մի՛ լիցի ներել, թէ գիտելով իցէ, թէ անգիտանալով՝ նզովիւք քակեսցին, ապա թէ ոչ կարեն՝ մի՛ լիցի հաղորդիլ ընդ նոսա, այլ լիցին հեռացեալք իբր զպոռնիկս, մինչեւ զղջացեալ քակեսցին եւ ապաշխարութեամբ ուղղեսցին, զի ի լինելն ոչ մնայ եւ ոչ մի, որպէս ի չորրորդին՝ երկու եւ յերրորդին՝ մին: Եւ այդ ըստ կանոնաց ներման, որ ասէ. քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ զսահմանսն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է: Յայտ է, զի զչորրորդէն եւ զհինգերորդէն ասէ: Չայդ ըստ Օրինաց եւ կանոնաց դատեցաք, թէ ո՞րպէս զուգին, եւ ներեսցին, եւ կամ բաժանեսցին: Եւ թէ ունէի յաղագս այդոցիկ ըստ տեսութեան դնել մտաց այլ ինչ, որ կամեսցայ, զի մի՛ ընդդէմ ինչ կարծիցիմ կանոնաց, այլ որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ: Եւ եթէ վարժ որ զրոց սովորութեան իցէ, տեսցէ զամենայնսդ հաւասարապէս յՕրինաց եւ ի կանոնաց, զի զբազումս ի զրոց տեսանենք յարանց անտեղեակ այդն լինել, զի որքան ի միոջէ կողմանէ իցէ

չորրորդն կամ հինգերորդն, գնոյն եւ ի միս կողմանէ պահանջելի է, որ է դուն ուրեք գտանիլ, զի զիւրն ասէ օրէնքն՝ զառականս մի՛ յայտնել, եւ զերրորդն թողլով ի միջոցին՝ զչորրորդն հրամայէ առնուլ: Նոյն եւ ծննդոցն է ըստ կանոնաց: Սակայն բազումք ի տգիտաց յառաջ բերեն զՅովհաննու Ոսկեբերանի զասացեալն, եթէ Օրէնքն ի մերձաւորաց հրամայէ յազգականաց առնուլ կին՝ ոչ կամել յօտարս զսերմն տալ, իսկ Աւետարանս՝ առ հեռաւորս զսերմն տալ: Արդ, եթէ այդքան է պատճառն, ընդէ՞ր ճշդի խնդրին ընտանիքն: Գիտելի է, զի սուրբն ասացուածովն զգօրութիւն Օրինացն եւ Աւետարանին ասէ, այլ ոչ զպահպանութիւն, զի ոչ ասաց, թէ վասն այսոսիկ ոչ է խտրելի ազգայինն, այլ գիտէ, զի Օրէնք է եւ պահելի է, զի ըստ ժամանակաց զանազանեցան այդոցիկ Օրէնք, զի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ օրինաւորութեան յայտնելոյ գիտութիւն: Յառաջ քան զՕրէնս զքոյր իսկ առնէին, եւ Օրէնքն հրաժարեցոյց: Օրէնքն զհօրքոյր եւ զմորքոյր եւ զեղբօր մօր դասերս ոչ հրաժարեցոյց, իսկ կանոնք զայսոսիկ եւ որ նման սոցին իբր զմերձաւորսն հրաժարեցոյց, ասելով՝ մի՛ որ արասցէ խնամութիւն մինչեւ ի չորրորդ եւ ի հինգերորդ զարմն: Եւ զայս աննշան ասէ, ոչ ըստ Օրինացն թուելով, թէ որո՞ց իցէ եւ ո՞րոց չիցէ, զի յայտ արասցէ ամենայն ընտանութեանն ծննդօք բաժանիլ: Եւ զի Հոգոյն Սրբոյ է օրինաւորութիւնս, զգուշութեամբ պահեսցուք, զի մի՛ դատապարտիցիմք: Եւ արդ, եթէ հաճոյ թուեսցին այս դատաստան յեկեղեցի, զի որքան կար էր՝ ի գրոց ճշմարտելով եղաք, ըստ այսմ վարեսցին, ապա թէ անհաճոյ՝ մի՛ իբր յանդուգն ըստգտցէ, այլ իբր տգիտելոյ՝ թողութիւն շնորհեսցէ մեզ եւ ուղիղ դատաստանաւ վարելով ըստ գրոց, որպէս տեսանէ կորովի մտօք զանձն, եւ զմեզ ազատ ի մեծէ եւ յանաչառ դատաստանէ ազատս արասցէ: Միայն մի՛ լիցի կաշառօք կուրացեալք, որպէս զբազումս տեսանենք, զի այնքան են վրէժխնդիր այդորիկ օրինաց, որքան զձեռս լի առնեն կաշառօք, զորոց զդատն հատուցանելոց են:

ԳԼՈՒԽ ՄԺԴ ՎԱՍՆ ՆԱԻԱՅ ԲԵԿԵԼՈՅ

Եւ զնաս բեկեալս ի ծովու մերձաւոր քաղաքն ձեռնատուութեամբ փրկիցէ, իբրու զի հանդերձեալ էր վայելուլ ի շահից նոցա. այլ յաւար առնուլ յօտար մարդկանէ վասն բեկմանն արտաքոյ է դատաստանի: Եւ թէ ձրի կամին փրկել, որքան հնար է՝ վարձս տացեն, եւ զՕրինացն ընդ միտ ածել՝ զանկեալ գրաստ յարուցանել ընդ տեսառն իւրում: Այլ ազահել եւ յափշտակել այսպէս լիցի դատաստան. կամ

որպէս թափէ գաւար, կամ իբր տէր, որ ի հնագանդելոց տասանորդէ, եւ կամ ի հնգէ: Եւ սակաւ գայդ եղաք գդատաստան, զի յոյժ ընդդէմ իրաւանց գործեն Հռոմայեցիք այդոցիկ. եւ զի մի՛ այն լիցի, թէ ի մերոց աւագաց պատահի տիրել ծովու:

ԳԼՈՒԽ ՄԺԵ ՎԱՍՆ ԽԱԲԵԲԱՅԻՑ

Եւ զի բազումք շրջին խաբէութեամբ յանուն սրբոյ եկեղեցոյ եւ վանաց եւ այլօք բազմադիմի պատճառօք եւ զբազումս պատրեն, մինչ զի ոչ է դիւրաւ ի վերայ կալ պատրուակեալ չարեաց նոցա, քանզի սովորին ընծայական առնել թուղթս եւ այլ եւս ձեւս ստանան կեղծաւորութեամբ: Արդ, յորժամ պատահի ի վերայ կալ նոցա եւ գտանել զխաբէութիւն նոցա, զժողովեալ ինչսն առնուլ, որ յայլոց եկեղեցոյ անուն իցէ, եւ թէ կարիս ինչ իցէ՝ յիւրաքանչիւր եկեղեցի անդ առաքել, յորոյ յանուն ժողովեալ է: Եւ թէ չիցէ հնար այսմ լինել, իրաւունս կարծեն ըստ պատճառի ժողովել ոյն այնպէս մատակարարել եպիսկոպոսաց եւ թէ այլ ոք իցէ: Եթէ պատճառաւ եկեղեցի շինելոյ իցէ եւ բաւական այսմ իցէ, այնպէս առնել, եւ թէ չիցէ բաւական, ի պէտս եկեղեցոյ ածցեն: Եւ թէ պատճառաւ գերութեան իցէ, յայնոսիկ վարիլ: Ըստ այնմ օրինակի լիցի եւ այլն ամենայն:

ԳԼՈՒԽ ՄԺԶ ՎԱՍՆ ՈՐ ՆՈՐ ԳԵՂ ՇԻՆԵՆ

Յորժամ գառաջինն շինեսցի գեղ, չէ հաստատուն բաժանումն հողոյն եւ ջրոյն եւ այլոց այսպիսեաց, մինչ բաւական բնակիչք ժողովեսցին, եւ ապա բաժանումն հաստատեսցին: Ապա թէ աւերակ շինիցի եւ չիցէ բազմաժամանակեայ, մինչ զի գիտել իւրաքանչիւր զսահման անդաստանի, ըստ սահմանի առաջնոցն կալցին: Իսկ եթէ բազմաժամանակեայ իցէ, եւ ոչ գիտիցեն զսահմանսն, եւ տէրութեան փոխումն եղեալ, նորոգ արասցեն բաժանումն հաւասարադատու թեամբ, նախ՝ եկեղեցոյն եւ ապա՝ այլոցն, եւ մասն աւելի տալով որ գլխատրն իցէ գեղջն՝ վասն հոգալոյ գայլսն:

ԳԼՈՒԽ ՄԺԷ ՎԱՍՆ ՈՐ ԳՆԵՆ ԵՒ ԾԱԽԵՆ ԿՈՒՄԱՇ ԵՒ ԱՅԼ ԻՆՉ

Վաճառք ամենայն հաստատին, յորժամ որք վաճառենն՝ ամենեցուն
յանձնատութեամբ վկայութեան կամքն ընդ նոսա իցէ: Ըստ այսմ լիցի. թէ հայր
վաճառիցէ, պարտ է ուստերաց եւ դստերաց իւրոց կամօք առնել եւ եղբարց, որ
ժառանգն իցեն. նմանապէս՝ թէ որդիքն վաճառեն՝ հօրն, եւ այլ եղբարցն, եւ
քերցն կամօք: Ապա թէ ոչ առնեն այնպէս, յորժամ կամին անդրէն դարձուցանել՝
իշխան լիցին, թէ եւ գրով հաստատեալ իցէ: Եւ թէ ի միասին գրով եւ վկայիւք
վաճառիցեն, եւ յաղագս աղքատութեան պատճառի իցէ, եւ սահմանաւ, գոր դնէ
վաճառողն, եւ կամ որպէս յառաջ ցուցեալ է, իշխան լիցին դարձուցանել, ապա
թէ անպատճառ իցէ՝ հաստատուն լիցի: Արդ այդպէս՝ կամ դարձցին եւ կամ
հաւանեցին ըստ արժանւոյն: Իսկ գիր հաստատութեան նշանաւ եպիսկոպոսին
լիցի կամ ճշմարիտ դատաւորին լիցի, սակայն նշանն՝ Քրիստոսի նշան խաչին եւ
պատկեր եպիսկոպոսին եւ կամ այլոց դատաւորաց, այսինքն՝ հայրապետաց: Եւ
թէպէտ այլոց ձեռամբ գրին, նոքօք նշանակեալք հաստատուն լիցին, որպէս ի
տուն թագաւորաց գրին գիր, սակայն արքունի նշանաւ նշանակին եւ այնպէս
հաստատին. նոյնպէս եւ աստ լիցի:

ԳԼՈՒԽ ՄԺԸ ՎԱՄՆ ԹԷ ԻՆՉ ՑԵՂ ԲԱԺՆԻԻ ԵԼԱՆԷ ՀԱՐՄՆ Ի ՏԱՆԷՆ

Եւ յորժամ բաժանեցին եղբարք ի միմեանց եւ բաժանունն արասցեն
հայրենեաց, նախ գհարսանցն բաժինսն յայտ արասցեն եւ յիրաքանչիւսն
տացեն, եւ ապա՝ ինքեանց հայրենեացն: Իսկ եթէ ի մէջ եղբարցն ծախեալ իցէ
ուրուք բաժին, յամենեցունց կանգնեցի, զի տէր է իւրաքանչիւր որ իւրոցն: Չայդ
հասարակ կարծելի է դատաստան ըստ քաղաքավարութեան աշխարհի: